



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«22» 03 2018 թ.

No 06/3-1/14156-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 26.02.2018թ.

թիվ 14 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի՝ առանձին հարկատեսակներին վերաբերող բաժիններով սահմանված դեպքերում հարկի կամ հարկման բազայի հաշվարկման համար հիմք հանդիսացող հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դրույթների հիման վրա, եթե օրենսգրքով չեն նախատեսվում դրանց կիրառության առանձնահատկություններ,

Օրենսգրքի 16-րդ հոդվածով սահմանված են արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների հաշվառման կանոնները, մասնավորապես՝ ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաների և ապրանքների սկզբնական արժեքների որոշման առանձնահատկությունները: Նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են՝ համապատասխանաբար ապրանքի ներմուծման կամ ապրանքի արտահանման հարկային հայտարարագրի ամսաթվի դրությամբ (անկախ հետագայում այդ գործառնությունների մասով ապրանքի ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր կամ ապրանքի արտահանման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու հանգամանքից)՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից: Նույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ նույն հոդվածի կիրառության իմաստով, որպես տվյալ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը:

Հաշվի առնելով վերոգրյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ ԱԱՀ-ի կամ ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման համար հիմք հանդիսացող հաշվառման առումով օրենսգրքի 16-րդ հոդվածով սահմանված են առանձնահատկություններ, հետևաբար՝ արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների մասով ձևավորվող ԱԱՀ-ով հարկման բազաները որոշվում են համապատասխանաբար ապրանքի ներմուծման և արտահանման հարկային հայտարարագրերի ներկայացման ամսաթվի դրությամբ՝ ելնելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ